*Լավությո՛ւն արա, ջուրը գցի՛ր՝ մի օր առջևդ կգա...*

# ԲԱՐԵԳՈՐԾ

**BAREGORTS** հունվար, **2019, № 1 (42)** **БАРЕГОРЦ**

«ԳՈՒՐԳԵՆ ՄԵԼԻՔՅԱՆԻ՝ ՔԱՇԱԹԱՂԻ ԲԱԶՄԱԶԱՎԱԿ ԸՆՏԱՆԻՔՆԵՐԻ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ» ՊԱՇՏՈՆԱԹԵՐԹ

## ԴՐԱՄԱՀԱՎԱՔ –2018



Խանդավառ բարեգործներ

### ԳՈՒՐԳԷՆ ՄԵԼԻՔԵԱՆԻ ՔԱՇԱԹԱՂԻ ԲԱԶՄԱԶԱՒԱԿ ԸՆՏԱՆԻՔՆԵՐԻ ՅԻՄՆԱԴՐԱՄԻ ՅԵՐԹԱԿԱՆ ԴՐԱՄԱՅԱՎԱՔԸ

Յողը, հայրենի հողը, սրբացուած է դարերով՝ անոր մէջ թափուած արիւնով ու արցունքով: Սերունդներ իրենց բազուկներով եւ ատամներով պաշտպանած են զայն, որովհետեւ մարդը առանց հայրենի հողի, իսկ վերջինս առանց իր զաւակներուն կը դառնայ խոպան, կը խորթանայ, կը մաշի ու կը հալի կ՝երթայ: Այս գիտակցութեամբ է որ վերջին տասնամեակներուն հազարաւոր հայորդիներ իրենց ի վերուստ տրուած ամէնէն թանկագին նուէրը՝ աստուածապարգեւ կեանքը տուին անոր՝ սրբազան ու նուիրական հայրենիքին պաշտպանութեան համար:

Յայրենի մտաւորական, արեւելագէտ եւ մեծ հայրենասէր Գուրգէն Մելիքեան ականատես եղաւ հայորդիներու սխրանքներուն ու նահատակութեան: Ան ջուրի ճանապարհ ըրաւ Երեւան-Արցախ, յատկապէս Քաշաթաղով Յայաստանին կապող երթուղին: Ան կը հաւատայ թէ

մարդն է երկիրը ապրեցնողը, շունչ տուողը, ուրեմն մարդը պէտք է պահել ԻՐ ՀՈՂԻՆ վրայ:

Այս վեհ նպատակին ծառայելու համար 1996-ին Գուրգէն Մելիքեան կը հիմնէ ՔԱՇԱԹԱՂԻ ԲԱԶՄԱԶԱՒԱԿ ԸՆՏԱՆԻՔՆԵՐԻ ՀԻՄՆԱԴՐԱՄԸ, որուն ծրագրին մաս կը կազմեն ծառատնկումները, ինագիտական պեղումները, հայագիտական կարեւոր գիրքերու հրատարակութիւններու սատար կենալը, օգնութիւններ հայ ընտանիքներուն, կրթաթոշակի յատկացումները ուսանողներուն եւ կովերու ծրագիրը:

Վերջերս կրկին անգամ Տիար Գուրգէն Մելիքեան կը գտնուէր Լոս Անճելըսի մէջ, ուր տեղի ունեցաւ աւանդական հիւրասիրութիւն մը Կլէնտէյլի §Սիփան¦ շքեղ սրահին մէջ՝ ի ներկայութեան եւ ի պատիւ հիմնադրամին սատար կանգնող անդամներու: Յայտագրին ընթացքին ցուցադրուեցաւ վաւերագրական տեսաերիզ մը՝ անցնող շրջանին կատարուած աշխատանքներուն մասին: Հիմնադրամին շնորհիւ բազմազաւակ ընտանիքներ ստացած են կովեր՝ իրենց սնունդին ապահովման եւ որոշ եկամուտ մըն ալ ապահովելու նպատակով: Վերջինիս շնորհիւ հարիւրաւոր ընտանիքներ ԿԸ ՄՆԱՆ ՀԱՅՐԵՆԻ ՀՈՂԻՆ ՎՐԱՅ, կը մշակեն զայն ու հարկ եղած պարագային ալ զէնքով կը պաշտպանեն ազատագրուած տարածքները:

Խօսելով ծառատնկումներու մասին Տիար Գ. Մելիքեան նշեց պուրակներու ռազմագիտական կարեւորութիւնը, այլեւ աւելցուց թէ պուրակները կը յաւերժացնեն անունները Ղարաբաղի համար սխրագործութիւններ կատարած հայ նահատակ զինուորներու: Հետաքրքրական հոս յիշել թէ ծառերու մէկ կարեւոր տոկոսը կը կազմեն ընկուզենիները, որոնք եկամուտ կը բերեն հայ ընտանիքներու եւ Հիմնադրամին:

Այս պուրակները ապագային ընդարձակուելով պիտի դառնան անտառներ եւ իւրաքանչիւն ծառ §պիտի բանայ իր բազուկներն ու հոգին… անոր պիտի գան փաթթըուիլ սիրողները գիւղին...¦ (Լեւոն Զ. Սիւրմէլեան, §Ասացուածք ծառ տնկելու առթիւ¦):

Գուրգէն Մելիքեան անխոնջ ու անհանգիստ հայրենասէր մըն է: Ան 1960-ականներուն Իրանէն ընտանեօք ներգաղթած է հայրենիք: Պարսկերէնի ու պարսկական գրականութեան քաջ գիտակ անձ մըն է եւ հոգուով ու սրտով միշտ կայտառ ու երիտասարդ: Իր սաներէն շատեր, որպէս իրանագէտ ու արեւելագէտ, ծառայած են ու ծառայեն Հայաստանի դիւանագիտական կեանքէն ներս: Տիար Գուրգէն Մելիքեան երկար տարիներէ ի վեր Երեւանի պետական համալսարանի արեւելագիտութեան բաժանմունքի դեկանն էր:

Ուժ եւ կորով կը մաղթենք մեր սիրելի ընկերոջ, որ այս թափով շարունակէ ծառայել արծուասիրտ Արցախին:

Դոկտ. Մինաս Գոճայեան
Լոս Անճէ



## Gurgen Melikyan Multichildren Family Foundation of Kashatagh

Land, native land is sanctified for centuries. It is shed with blood and tears. Generations have defended it with arms and teeth, because a human without native land and the land without its children will become undeveloped land, an alien, wear out and melt away.

It is with this consciousness, that during the last decade thousands of Armenians gave their lives for the defense of the most precious gift.

Armenian intellectual, orientalist and a great patriot Gurgen Melikyan was a witness of feats and martyrdom of Armenian soldiers.

He frequently travelled from Yerevan to Artsakh especially, Kashatagh, the road connecting Armenia. He believes that a human being makes the country live, breathe, therefore a human being should live in his land.

To serve this noble purpose, Gurgen Melikyan founded Multichildren Family Foundation of Kashatagh in 1996. Foundation's projects include tree planting, archeological excavations, book publishing, assistance to Armenian families, student tuition and cow project.

Recently, Mr. Gurgen Melikyan was in Los Angeles again for the traditional reception-fundraiser event at Sepan banquet hall.

During the event, the documentary video about foundation's activities was shown. Thanks to the foundation, multichildren families have received cows supplying families with food and income. Thanks to this project, hundreds of families will remain in their land, cultivate it and will defend the liberated areas when needed.

Talking about tree planting, Mr. Melikyan noted that the parks are strategically important and added that the parks will immortalize the names of martyrs who fought for Karabagh.

It will be interesting to remember that one percent of the trees make the walnut trees which bring income to the Armenian families and Foundation.These parks will become forests and each tree will open its arms and soul and the people living in the village will embrace them (poem by Levon Zaven Surmelian, "Saying about the tree planting"). Gurgen Melikyan is a persistent and an anxious patriot. He migrated to his motherland in 1960s with his family. Has a great knowledge of Persian language and literature and is always young and cheerful. Most of his students, as experts of Iranian and Oriental studies, have served and currently are serving as Armenian diplomats worldwide.



## Gurgen Melikyan Multichildren Family Foundation of Kashatagh Fundraiser on November 11 th 2018

| LAST NAME | FIRST NAME | CHECK # | | CASH |
|---|---|---|---|---|
| | | Check # | Amount | |
| Aboolian | Karine & Saro | | | $ 150.00 |
| Aganyan | Hakop | | | $ 75.00 |
| Aghbashian | Hambersom | 506 | $ 100.00 | |
| Aleksandryan | Irina | 702 | $ 240.00 | $ 25.00 |
| American Heating Technology | | 1518 | $ 900.00 | $ 30.00 |
| Amirian | Robert | 6333 | $ 500.00 | $ 75.00 |
| Amirkhanian | Rita Vova | | | $ 200.00 |
| Anahid Fund | | 1068 | $ 1,500.00 | |
| Arakelyan, Manukyan | Nvard, Tatevik | | | $ 150.00 |
| Aref | Tsaghkush & Johnie | | | $ 100.00 |
| Arezouyan | Hratch | | | $ 100.00 |
| Armenian International Foundation | | 1008 | $ 700.00 | |
| Armenia Artsakh Fund Inc | | 1418 | $ 621.00 | |
| Arzoumanian | Tagoui | 1396 | $ 200.00 | |
| Asherie | Ruben | | | $ 200.00 |
| Atelier de Paris | | 10881 | $ 40.00 | $ 350.00 |
| ATS Foundation | Alen Petrossian | 1003 | $ 2,000.00 | |
| Avanessian | Edward | | | $ 200.00 |
| Avionics Plus Inc | | 1830 | $ 500.00 | |
| Avagyan | Gayane | | | $ 150.00 |
| Avanessian | Edo | 1606 | $ 40.00 | $ 200.00 |
| Avanessian | Albert | | | $ 600.00 |
| Avedissian | Silva , Solak | 3696 | $ 150.00 | |
| Avanessian | Norick & Rima | 1018910933 | $ 700.00 | |
| Avanessian | Norick & Rima | 1018911332 | $ 700.00 | |
| Badalyan | Sarkis | | | $ 300.00 |
| Badalyan | Suren | | | $ 150.00 |
| Baghdanian | Hamo & Medik | 1335 | $ 100.00 | |
| Baghdanian | Ariknaz & Avydis | | | $ 300.00 |
| Baghramyan | Varujhan | 1830 | $ 500.00 | |
| Balian | Harout Raffi | 689 | $ 750.00 | |
| Balian | Misak | | | $ 150.00 |
| Baronikian | Felix & Lilit | 2642 | $ 150.00 | |
| Baronikian | Felix & Lilit | 2643 | $ 105.00 | |
| Barseghian | Albert | | | $ 600.00 |
| Bashmakian | Hagop & Alissa | 654 | $ 500.00 | |
| Bazikian | Rafik | | | $ 750.00 |

| | | | | |
|---|---|---|---|---|
| Bostanjian MD, INC | David | 1940 | $ 500.00 | |
| Charchian | David | 949 | $ 2,000.00 | |
| Charchian | Arthur | 1068 | $ 500.00 | |
| Cohen | Mabelle | 818 | $ 150.00 | |
| Cohen | Mabelle | 819 | $ 150.00 | |
| Der Sahakian | Henrik | 1058 | $ 500.00 | |
| Encino Fireplace Shop Inc | | 10244 | $ 1,400.00 | |
| Enduro Database Consulting Inc | | 98 | $ 500.00 | |
| Eskandar | Alenoosh | 4082 | $ 300.00 | |
| Eskandar | Alenoosh | 4083 | $ 200.00 | |
| First Look Optic | | 6370 | $ 2,000.00 | |
| Fresh & Tasty, Inc | | 4647 | $ 1,000.00 | |
| Fundukian | Vardan | 1019 | $ 2,000.00 | |
| G.Z. anonymous | | | | |
| Galstanian | Rafik | | | $ 500.00 |
| Garun | | | | $ 388.00 |
| Gasparian | Ohan | | | $ 200.00 |
| Gasparian-Avakian | Gayane | | | $ 100.00 |
| Ghassemian | Hovik | 2484 | $ 100.00 | |
| Ghevondian | Masis (GHEVENDIAN TRUST) | 198 | $ 5,000.00 | |
| Ginosyan | Gagik | | | $ 400.00 |
| Glendale family optometry | Ani Halabi O.D. | 2588 | $ 700.00 | |
| Gourjian | Roubin | 7633 | $ 200.00 | |
| Gregory | Victor | 5761 | $ 500.00 | |
| Guledjian | Hagob & Anahit | 8493 | $ 300.00 | |
| Haghounian | Mariette | 0698 | $ 200.00 | |
| Hayrapetian | Armen & Elenora | | | $ 1,100.00 |
| Hayrapetian Dental Corporation | Alajajian T. | 5556 | $ 1,000.00 | |
| Haytayan | Leon | | | $ 500.00 |
| Hovhannisyan | Gagik | | | $ 150.00 |
| Hrazdan Majidiyeh | | 1183 | $ 1,500.00 | |
| In the Arms of Grace Hospice Inc | Tutunjyan Gevorg | 1784 | $ 500.00 | |
| Information Integration Group | | 2921 | $ 2,500.00 | |
| Janoian and Kristorian | Noobar and Sonia | 5919 | $ 1,000.00 | |
| Kalognomos | Medea & Alexander | | | $ 500.00 |
| Kanian | Nick & Mary | 4709 | $ 1,000.00 | |
| Kanian | Nick & Mary | 4701 | $ 250.00 | |
| Khachaturyan, Pilosyan | Tigran, Ani | 156 | $ 750.00 | |
| Khanlaryan | Albert (DBA Mars Auto) | 9274 | $ 500.00 | |
| Kilejian | Ashkhen | 1401 | $ 50.00 | $ 225.00 |
| Kiraj & Muradyan Dental Corp | | 3753 | $ 75.00 | |
| Kojaian | Minas & Nazelie | 2511 | $ 200.00 | |
| Koshkaryan cardiology | | 1090 | $ 750.00 | |
| Krikorian | Krikor | 129 | $ 750.00 | |
| Krkhyan | Akop | | | $ 150.00 |

| | | | | |
|---|---|---|---|---|
| Kusherian | Vardui | 1583 | $ 200.00 | |
| Kyureghian | Varujh & Emma | | | $ 450.00 |
| Kyureghian | Varujh & Emma | | | $ 2,000.00 |
| Lankershim Tire & automotive center | | 5873 | $ 500.00 | |
| Lusparyan | Oganes | | | $ 200.00 |
| Manucharyan | Vahagn | | | $ 200.00 |
| Marashlian | Levon | 1184 | $ 20.00 | |
| Marashlian | Levon | 1185 | $ 350.00 | |
| Marashlian | Levon | 1183 | $ 75.00 | |
| Markarian | Sevak | | | $ 50.00 |
| Martin | Zareh | | | $ 350.00 |
| Martirossian | Aida & Aram (arakel) | | | $ 150.00 |
| Medical Outreach For Armenians | | 1168 | $ 400.00 | |
| Melkonian | Markar | | | $ 52.00 |
| Mesropian | Seroj | 179 | $ 3,500.00 | $ 150.00 |
| Minasvand | Anik | 4518 | $ 100.00 | |
| Mnatsakanyan, Bazikyan | Garnik, Adrine | 2964 | $ 775.00 | |
| Mulroy | Anna Annik | | | $ 550.00 |
| Najarian | Carolann | 345, 350 | $ 10,000.00 | |
| Nazarian | Mane | | | $ 500.00 |
| Nor or Charitable Foundation | | 1137 | $ 2,000.00 | |
| Ovanessian | Irene | 3165 | $ 1,000.00 | |
| Papayans | Sheila | 2312 | $ 2,000.00 | |
| Petrossian | Grigor & Seda | 106 | $ 200.00 | |
| Pilossyan | Vagharshak | 3856 | $ 1,000.00 | |
| Pilossyan | Vagharshak | 3893 | $ 1,500.00 | |
| Premier Dental Clinic Inc | | 2870 | $ 150.00 | |
| Raffle tickets and souvenirs | | | | $ 5,975.00 |
| Sahakyan | Hayk | | | $ 200.00 |
| Sahakyan | Lusine | | | $ 100.00 |
| S & A Mechanical | | 11354 | $ 1,000.00 | |
| Samuelian | David | | | $ 140.00 |
| Sarian | Flora | | | $ 75.00 |
| Setian | Vahagn | 1338 | $ 500.00 | |
| Setian | Ida | | | $ 75.00 |
| Shahbazian | Karnik | 2367 | $ 500.00 | |
| Simonian | Anzhel | | | $ 75.00 |
| Tchobanian Khatchadourian | Aram & Aida | 3463 | $ 1,000.00 | |
| Torosian | Romik | 772 | $ 300.00 | |
| Tumanyan | Nerses | 439 | $ 1,000.00 | |
| Vartanian | Albert | | | $ 150.00 |
| Vartanian | Olga & Sooren | 7572 | $ 100.00 | |
| Vartanian | Harry, Shushan | 1430 | $ 200.00 | |
| Vartanian | Raymond | | | $ 145.00 |
| Vartanian Ararat Foundation | Frederick | 6000 | $ 100.00 | $ 636.00 |

| | | | | |
|---|---|---|---|---|
| Vartanian Ararat Foundation | Frederick | 6005 | $ 200.00 | |
| VJ & Associates | | 1990 | $ 450.00 | |
| VJ & Associates | | 2272 | $ 850.00 | |
| Voskanyan | Gayane | | | $ 150.00 |
| Yale Jewelers Inc | | 9667 | $ 200.00 | |
| Yegiyants | Artoush & Hasmik | 1318 | $ 200.00 | $ 50.00 |
| Yegiyants | George & Matilda | | | $ 250.00 |
| Yegiyants | Anahit | 4396 | $ 75.00 | |
| Yegiyants M.D. Inc. | Siranoosh-Sara | | | $ 200.00 |
| Zakian | Astkhik Star | 1414 | $ 750.00 | |
| Zargaryan | Vigen | 7667 | $ 50.00 | |
| Zargaryan | Vigen | 7666 | $ 375.00 | |
| Zargaryan | Vigen | 7665 | $ 380.00 | |
| Total | | | $ 72,021.00 | $ 21,941.00 |

# ՆԱՄԱԿՆԵՐ ՀԱՅ ԶԻՆՎՈՐԻՆ ԱՐՏԵՐԿՐԻՑ

Հիմնադրամիս հասցեով արտերկրի մեր հայրենակիցներից ստացվում են հայ զինվորին ուղղված նամակներ: Զինվորները, անշուշտ, նամակագիրների արյունակից հարազատները չեն, բայց պարզ ու անպաճույճ այդ հուզիչ նամակները՝ երբեմն թոթովախոս մանկան անվարժ ձեռքով գրված, բխել են հենց հարազատի սրտից: Փոքրիկ նամակագիրներն իրենց սերն ու հպարտությունն են արտահայտում մեր հայրենիքի սահմաններն անառիկ պահող հայ զինվորների հանդեպ, տագնապում նրանց բախտի համար, մաղթում անվտանգ ծառայություն ու բարի վերադարձ հայրենի օջախները:

Նամակները տպագրում ենք մասնակի ուղղումներով:

Ընթերցենք դրանցից մի քանիսն ու փոխանցենք:

Սիրելի՛ հայ զինվոր,

Ողջ հայությունը, նաև ես, հպարտ ենք Ձեզանով:Դուք, որ խիզախորեն պաշտպանում եք մեր հայրենիքի սահմանները, արդեն իսկ մեծ հպարտություն եք արթնացնում իմ սրտում:

Չնայած այն հանգամանքին, որ ես Հայաստանում չեմ ապրում, Դուք միշտ օրինակ եք եղել ինձ և շատ երեխաների համար:

Ես տասնչորս տարեկան տղա եմ, ով միշտ հետևում է իրենից ավագների օրինակին, ովքեր, որպես հասուն մարդիկ, կատարում են իրենց մարդկային պարտքը հայրենիքի հանդեպ և շատ դրական ազդեցություն են գործում մարդկանց վրա: Ես համոզված եմ, որ այն, ինչ Դուք եք անում մեր հայրենիքի ու ժողովրդի համար, յուրահատուկ ու մեծ սխրանք է, և Դուք արժանի եք հարգանքի և օրինակի:

Ուզում եմ կրկին հայտնել Ձեզ իմ երախտագիտությունն ու խոնարհվել Ձեր առաջ, որովհետև Դուք պատրաստ եք Ձեր կյանքը զոհաբերել յանուն մեր հայրենիքի լուսավոր ապագայի:

Հույսով եմ, որ շուտով կվերադառնաք ձեր օջախները և, որպես հպարտ հայեր, երջանիկ կապրեք ձեր ընտանիքների հետ:

Ամուր գրկում եմ Ձեզ՝ ԱԼԵՔՍԱՆԴՐ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

* * *

Մեր սիրելի հայ զինվոր,

Շնորհակալ եմ, որ օր ու գիշերմեր սահմաններն եք պահում: Ես հպարտ եմ, որ Դուք մեր ժողովրդի զավակն եք, և ես հոգով ու սրտով Ձեզ հետ եմԵս հպարտ եմ Ձեզանով, անվանում եմ իմ եղբայր: Ճիշտ է, որ մենք չենք ապրում Հայաստանում, բայց մեր սրտերը Ձեզ հետ են, որովհետև Դուք ծառայություն եք մատուցում մեր հայրենիքին: Դուք շատ համարձակ եք, խիզախ և հավիտյան կլինեք հերոս, ինչպես Մոնթեն, Վարդանը և ուրիշներ:

Ես հայուհի եմ և պատրաստ եմ գալ ու միանալ Ձեզ, համալրել Ձեր շարքերը: Ափսո՜ս, որ աղջիկներին չեն ընդունում...

Աղոթում եմ, որ Աստված միշտ Ձեզ հետ լինի և Ձեզ պահապան:

Սիրով՝ ՕԼԻՎԻԱ ՔԱՐԱՄՅԱՆ

* * *

Բարև՛, սիրելի զինվոր:

Իմ անունը Արմեն է: Ես տաս տարեկան եմ և ապրում եմ Լոս Անջելեսում: Արդեն երկու անգամ եղել եմ Հայաստանում: Իմ պապիկից լսել եմ, որ հայ զինվորը քաջ է և խիզախ: Երբ մեծանամ, ես էլ եմ ուզում քաջ զինվոր դառնալ: Ես եղբայր չունեմ և քեզ համարում եմ իմ մեծ եղբայր:

Սիրելի՛ զինվոր, երբ Հայաստան գամ, ուզում եմ քեզ հանդիպեմ և գրկեմ որպես իմ մեծ եղբայր:

Համբուրում եմ՝ ԱՐՄԵՆ

* * *

Սիրելի՛ հայ զինվոր,

Ես Նարեկ Ժամկոչյանն եմ, ապրում եմ Մացյալ Նահազներում: Ես շատ եմ սիրում իմ հայրենիքը՝ Հայաստանը: Ամառային արձակուրդները Հայաստանում եմ անցկացնում իմ ընտանիքի հետ՝ մեր սեփական տանը:

Սիրելի առյուծասիրտ զինվոր, Դուք մեր ազգի լույսն եք՝ հավատարիմ մեր հայրենիքին:Դուք մեր ազգի ասպետներն եք, և ես ամեն օր աղոթում եմ Ձեզ համար:

Ես դեռ փոքր եմ, բայց եթե իմ հայրենիքին երբևէ վտանգ սպառնա, զենքը ձեռքս կվերցնեմ և Ձեր կողքին կկանգնեմ:

Թող Աստծո օրհնությունը միշտ Ձեր վրա լինի, որպեսզի Դուք հաջողությամբ ավարտեք Ձեր Ձեր սրբազան առաքելությունը:

Խնդրում եմ ինձ հայտնեք Ձեր տվյալները, որպեսզի ամռանը հանդիպենք:

ՆԱՐԵԿ ԺԱՄԿՈՉՅԱՆ

* * *

Սիրելի՛ զինվոր,

Ես շատ շնորհակալ եմ քեզ, որ դու, վտանգելով քո կյանքը, պահպանում ես մեր երկրի սահմանները, մեր երկիրը: Դու ես, որ թշնամուն յանզնեցնում ես, երբ պետք է: Դու ես, որ ցրտին, դժվարություններին միշտ պատրաստ ես տալ քո կյանքըմեր հայրենիքի համար: Ես գիտեմ, թե որքն դժվար է ապրել ընտանիքից հեռու: Բայց դուք կարոտը ձեր սրտում, ոչ մի րոպե չեք հուսահատվում և ծառայում եք հանուն հայրենիքի,հանուն մեր ժողովրդի: Ես համբուրում եմ ձեր ձեռքերը և աղոթում, որ աստված միշտ ձեզ հետ լինի և պահի ու պահպանի բոլոր փորձանքներից:

Լավագույն բարեմաղթություններով՝

ՄԱՐԻԱՆԱ ԿՃՈՋՅԱՆ


| **Board Members, USA branch** | **Հոգաբարձության խորհրդի անդամներ, ԱՄՆ մասնաճյուղ** |
|---|---|
| Alajajian Teresa | Ալաջաջյան Թերեզա |
| Aleksandryan Irina | Ալեքսանդրյան Իրինա |
| Bashmakian, Hakop | Բաշմակյան Հակոբ |
| Gevorgyan, Lilit | Գևորգյան Լիլիթ |
| Jangozian, Vartan | Ջանգոզյան Վարդան |
| Kanyan, Mary | Քանյան Մերի |
| Kureghian, Varuj | Կյուրեղյան Վարուժ |
| Papayans Sheila | Փափայանց Շիլա |
| Sarafian, Moris | Սարաֆյան Մորիս |
| Seradarian, Vatche | Սերադերյան Վաչե |
| Torosian, Rostom | Թորոսյան Ռոստոմ |
| Vardanian, Armond | Վարդանյան Արմոնդ |



**ԽՄԲԱԳՐԱԿԱԶՄ**

ԳԼԽԱՎՈՐ ԽՄԲԱԳԻՐ՝ **ՍԱՄՎԵԼ ՄՈՒՐԱԴՅԱՆ**, բան. գիտ. դոկտոր, պրոֆեսոր

**ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԽՈՒՄԲ՝**

ԱՎԱԳՅԱՆ Ա., բ. գ. դ., պրոֆեսոր

ՄԵԼԻՔՅԱՆ Գ., բ. գ. թ., պրոֆեսոր

ՍԱՖԱՐՅԱՆ Ա., պ. գ. թ., պրոֆեսոր

*Նյութերը, շարվածքը և ձևավորումը՝ Ս. Մուրադյանի:*

Տպաքանակը՝ 99: Թերթը բաժանվում է անվճար:

**Խմբագրության հասցեն և հեռախոսները՝**

Երևան 0025, Աբովյան 52 Ա, ԵՊՀ հայ բանասիրության ֆակուլտետի մասնաշենք, 215 սենյակ:

060 710 629, 055 52 29 36, 55 25 37,  52- 29 36: